ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-1/7» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

07.05.2021թ.
ժամը 10^{30}

Մասնակցում էին՝
Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԳՎ ՏԱ վարչության ապահովման 2-րդ բաժնի պետ, մայոր Գ. Սարգսյան (ԳԱՊ),
ՀՀ ՋՈՒ կապի և ԱԿՀ վարչության ՏԱ բաժնի սպա, ավագ սպա Խ. Երիցյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱԳՎ ՏԱ վարչության ապահովման 2-րդ բաժնի գլխավոր մասնագետ Ռ. Զաղոյան,
ՀՀ ՊՆ 31233 զորամասի տեխնիկ-մեխանիկ Ծ. Մելքումյան:
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության գնումների կազմակերպման վարչության գնումների կազմակերպման 1-ին բաժնի ավագ մասնագետ, Ս.Եսոյան:

«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-1/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ս.Եսոյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-1/7» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.

4 Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-1/7» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

5.Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4 դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Ս.Եսոյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-1/7» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակցի անվանում
1	«Էյչ Գրուպ» ՍՊԸ
2	«Տեխնոֆորում» ՍՊԸ
3	«Պատրոն ՌՄ» ՍՊԸ
4	«ԹԻՄ ՍԻՍԹԵՄՍ» ՓԲԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2 .« ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-1/7» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր

հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Ա.Եսոյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը **www.armeps.am** կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-1/7» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Ս. Եսոյան)

3.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-1/7» ծածկագրով ընթացակարգին գնային առաջարկ են ներկայացրել 4 մասնակիցներ.

Հ/հ	Ապրանքի անվանումը	չ/մ	քանակը	Նախահաշվ. գումարը	Մրցույթին մասնակցող կազմակերպությունների անվանումները	գնային առաջարկները առանց ԱԱՀ	ԱԱՀ	ընդհանուր գինը	Ծանոթություն
1	համակարգչային սերվերներ	հատ	4	6000000	«Էյչ Գրուպ» ՍՊԸ	5800000	1160000	6960000	Բանակցություն
2	համակարգիչ ամբողջը մեկում	հատ	100	20640000	«Էյչ Գրուպ» ՍՊԸ	33000000	6600000	39600000	Բանակցություն
					«Տեխնոֆորում» ՍՊԸ	30500000	6100000	36600000	
					«ԹԻՄ ՍԻՍԹԵՄՍ» ՓԲԸ	27000000	5400000	32400000	
3	դյուրակիր համակարգիչներ	հատ	100	22000000	«Էյչ Գրուպ» ՍՊԸ	33000000	6600000	39600000	Բանակցություն
					«Տեխնոֆորում» ՍՊԸ	32500000	6500000	39000000	
					«ԹԻՄ ՍԻՍԹԵՄՍ» ՓԲԸ	32500000	6500000	39000000	
4	լազերային տպիչներ	հատ	200	18000000	«Էյչ Գրուպ» ՍՊԸ	14800000	2960000	17760000	«ԹԻՄ ՍԻՍԹԵՄՍ» ՓԲԸ
					«Տեխնոֆորում» ՍՊԸ	15000000	3000000	18000000	
					«Պատրոն ՌՄ» ՍՊԸ	Սխալ գին	Սխալ գին	Սխալ գին	
					«ԹԻՄ ՍԻՍԹԵՄՍ» ՓԲԸ	13600000	2720000	16320000	

3.2 «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի, «Տեխնոֆորում» ՍՊԸ-ի և «ԹԻՄ ՍԻՍԹԵՄՍ» ՓԲԸ-ի գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/: Իսկ «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ի հայտը գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել, քանի որ վերջինիս կողմից

ներկայացված գնային առաջարկը չի համապատասխանում «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-1/7» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին՝ մասնավորապես, գնային առաջարկի Արժեք, ԱԱՀ և Ընդհանուր գին սյունակներում թվերով և տառերով արտահայտված տվյալները չեն համապատասխանում միմյանց:

3.3 Քանի որ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-1/7» ծածկագրով ընթացակարգի 1-ին չափաբաժնին հայտ է ներկայացրել մեկ մասնակից, 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով առաջարկված գները գերազանցում են պլանավորված նախահաշվային գները՝ գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի և ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները 07.05.2021թ. որոշեց նիստը կասեցնել և գների նվազեցման նպատակով 12.05.2021թ. ժամը 12:00-ին ՀՀ ՊՆ ԳԿ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) կազմակերպել բանակցություններ: Նախատեսված բանակցություններին ներկայացան միայն «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ն և «ԹԻՄ ՍԻՍԹԵՄՍ» ՓԲԸ, «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ն 1-ին չափաբաժնի մասով գինը նվազեցրեց և առաջարկեց 5 880 000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ-ն), իսկ 3-րդ չափաբաժնի մասով՝ 38 400 000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ-ն): «ԹԻՄ ՍԻՍԹԵՄՍ» ՓԲԸ-ն գինը նվազեցրեց միայն 2-րդ չափաբաժնի մասով՝ առաջարկելով 31 920 000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ-ն):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին.

(Ս. Եսոյան)

4.1 Հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը՝ 25.05.2021թ. «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-1/7» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգում՝ 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչվեց «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ն, 4-րդ չափաբաժնի մասով՝ «ԹԻՄ ՍԻՍԹԵՄՍ» ՓԲԸ-ն, միաժամանակ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի գ) պարբերությունը՝ գնահատող հանձնաժողովը 3-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչեց «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ին, իսկ 2-րդ չափաբաժնի մասով՝ «ԹԻՄ ՍԻՍԹԵՄՍ» ՓԲԸ-ին:

4.2 Հանձնաժողովը որոշեց անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակիցներին պայմանագրեր կնքելու առաջարկ ներկայացնել: Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-1/7» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագրեր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել այն: Սույն ընթացակարգի մասով սահմանվում է հինգօրյա անգործության ժամկետ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ

(Ս. Եսոյան)

5.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-1/7» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ) Գ. Սարգսյան

Գնահատող Խ. Երիցյան

Գնահատող Հ. Զադոյան

Գնահատող Ծ. Մելքումյան

Գնումները համակարգող՝ Ս. Եսոյան